ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«27» 01 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Մ. Անանյան

ԳԲԽ-03/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Գագաթ» ՍՊԸ-ի 21.01.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Գագաթ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Գագաթ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 21.01.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 12.01.2016թ. թիվ 52/15 որոշմամբ (այսուհետ նաև՝ Որոշում) «ՀՀՌՑ-15.9-ՇՀԱՊՁԲ-15/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը

հայտարարվել է ապօրինի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 22-րդ հոդվածի 2-րդ մասի և 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտման հիմքով:

Ընկերությունը տեղեկացրել է, որ Որոշմամբ ոտնահարվել է «ՀՀՌՑ-15.9-ՇՀԱՊՁԲ-15/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) հաղթող ճանաչված «Գագաթ» ՍՊԸ-ի շահերը, ինչի կապակցությամբ Ընկերությունը ներկայացնել է հետևյալ փաստարկները.

1. Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է առանձին բնութագրեր ունեցող գնումները խմբավորել որպես մեկ չափաբաժին:

Վերը նշված հարցի հիմնավորման համար «Գագաթ» ՍՊԸ-ն 19.01.2016թ. թիվ 02 գրությամբ դիմել է «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), որի կապակցությամբ վերջինս հայտնել է, որ անխափան սնուցման սարքերը հնարավոր չէր ներկայացնել առանձին չափաբաժիններով հետևյալ պատճառով. այդ սարքերը կազմելու են գործող միասնական տեխնիկական համակարգի բաղադրիչ մաս, որը պետք է ինտեգրվի ՀՀ-ում ներդրված թվային ցանցի տեղեկատվական կառավարման սերվերներին, թվային ազդանշանի ձևավորման ու հեռարձակման էլեկտրոնային թվային սարքավորումներին, ինչպես նաև հանգույցային, միջանկյալ, վերջնամասային թվային հաղորդիչ սարքավորումներին և արբանյակային հաղորդիչ կայաններին: Սարքավորումները պետք է բավարարեն համակցելիության, փոխադարձ փոխարինելիության, ինչպես նաև, երաշխիքային և ետերաշխիքային սպասարկման փուլերում սարքերի, պահեստամասերի, հանգույցների, առանձին ռադիոդետալների և ծրագրային ապահովումների նույնատեսակության պայմաններին, ինչը հնարավոր է միայն մեկ արտադրողի և մեկ մատակարարի դեպքում:

«Գագաթ» ՍՊԸ-ն ներկայացրել է ցանցի սարքավորումների մոնիտորինգի ղեկավարման և վերահսկման համակարգի նախագծող և մատակարար, եվրոպական հեղինակավոր <ELTI> ընկերության կողմից 21.01.2016թ. ստացված կարծիքը՝ վերոնշյալ հարցի վերաբերյալ:

2. Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը մերժվում են, եթե չեն համապատասխանում հրավերով նախատեսված պայմաններին:

Ընկերությունը գտնում է, որ «Միկրորինգ» ՍՊԸ-ի պնդումները այն մասին, որ ապրանքը չի համապատասխանում հրավերի տեխնիկական պահանջներին անհիմն են: Վկայակոչված ինտերնետային կայքի տեղեկատվությունը չի կարող համարվել ապրանքատեսակների սպառիչ ցանկ, քանի որ պատվերի ձևավորման դեպքում արտադրողը արտադրանքը համապատասխանեցնում է պատվիրատուի կոնկրետ պահանջներին: Լրացուցիչ կցվում է արտադրող հավատարմագրված ձևը (MAF):

«Գագաթ» ՍՊԸ-ն նշել է, որ վերոհիշյալը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ Պատվիրատուի մասնագիտական խմբի կողմից ստուգվել է անխափան սնուցման սարքերի փաստացի համապատասխանությունը գնման հայտով ներկայացված տեխնիկական բնութագրի պահանջներին և կազմվել է համապատասխան եզրակացություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Գագաթ» ՍՊԸ-ն խնդրել է Որոշմամբ, Օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասի և 6-րդ մասի 2-րդ կետի հիմքով, ապօրինի հայտարարված Ընթացակարգը հայտարարել օրինական:

Ընկերությունը նշել է նաև, որ պայմանագրի գործողության ժամկետը մինչև ս.թ. հունվարի 30-ն է և դրանից հետո առաջանում են նոր պարտավորություններ երրորդ անձանց նկատմամբ և դրանից բխող վնասներ, ուստի խնդրում ենք գործընթացը իրականացնել մինչև նշված ժամկետը:

2. <u>«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն 25.01.2016թ. թիվ 32-35 գրությամբ հայտնել է, որ «ՀՀՌՑ-15.9-ՇՀԱՊՁԲ-15/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող և բողոքարկման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճենները տրամադրվել է «Գագաթ» ՍՊԸ-ին:

Միաժամանակ Պատվիրատուն գտել է, որ բողոքում ներկայացված հիմքերով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 12.01.2016թ. թիվ 52/15 որոշմամբ ապօրինի հայտարարված ընթացակարգը պետք է հայտարարել օրինական:

3. ԳԲԽ-03/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-03/16 բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Անխափան սնուցման սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՌՑ-15.9-ՇՀԱՊՁԲ-15/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Միկրորինգ» ՍՊԸ-ն և «Գագաթ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում «ՀՀՌՑ» ՓԲԸ կարիքների համար անխափան սնուցման սարքերի ձեռքբերումը, որոնք խմբավորված են մեկ չափաբաժնով:

3. Ընթացակարգի տեխնիկական բնութագրի մեկ չափաբաժնում ներառված են «700 Վտ հզորությամբ անխափան սնման աղբյուրներ (UPS) (210 հատ)», «1980 Վտ հզորությամբ Smart անխափան սնման աղբյուրներ (UPS) 2 հատ», «4500 Վտ հզորությամբ Smart անխափան սնման աղբյուրների (UPS) 4 հատ», «32000 Վտ հզորությամբ Smart անխափան սնման աղբյուրներ (UPS) 2 հատ» ապրանքատեսակները:

4. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ ի դեմս ԳԲԽ-52/15 բողոքը քննող հանձնաժողովի, 12.01.2016թ. կայացրած որոշմամբ մասնակի բավարարել է «Միկրորինգ» ՍՊԸ-ի 24.12.2015թ. ներկայացրած բողոքը, մասնավորապես.

- «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից անխափան սնուցման սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՌՑ-15.9-ՇՀԱՊՁԲ-15/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը հայտարարվել է ապօրինի:
- «Միկրորինգ» ՍՊԸ-ին «ՀՀՌՑ-15.9-ՇՀԱՊՁԲ-15/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգում հաղթող ճանաչելու մասին պահանջը մերժվել է:

5. «Գագաթ» ՍՊԸ-ն ներկայացրել է «ELTI» ընկերության 21.01.2016թ. գրությունը և մասնագիտական խմբի 21.01.2016թ. եզրակացությունը:

4. ԳԲԽ-03/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Գագաթ» ՍՊԸ-ի 21.01.2016թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը, «ՀՀՌՑ-15.9-ՇՀԱՊՁԲ-15/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր) հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի հայտարարելու պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո:

Հայտնում ենք, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի և «Գագաթ» ՍՊԸ-ի միջև 30.11.2015թ. կնքվել է թիվ «ՀՀՌՑ-15.9-ՇՀԱՊՁԲ-15/12» պայմանագիրը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ ի դեմս ԳԲԽ-52/15 բողոքը քննող հանձնաժողովի, 12.01.2016թ. կայացրած որոշմամբ մասնակի բավարարել է «Միկրորինգ» ՍՊԸ-ի 24.12.2015թ. ներկայացրած բողոքը, մասնավորապես, «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից անխափան սնուցման սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՌՑ-15.9-ՇՀԱՊՁԲ-15/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը հայտարարվել է ապօրինի:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 12.01.2016թ. կայացրած որոշումից հետո «Գագաթ» ՍՊԸ-ի 21.01.2016թ. ներկայացրած բողոքի քննության ընթացքում ներկայացրած ապացույցների և նոր ի հայտ եկած հանգամանքների ուսումնասիրման արդյունքում պարզվել է հետևյալը.

- Ըստ Պատվիրատուի՝ անխափան սնուցման սարքերը հնարավոր չէր ներկայացնել առանձին չափաբաժիններով, քանի որ այդ սարքերը կազմելու են ***գործող միասնական տեխնիկական համակարգի բաղադրիչ մաս***, որը պետք է ինտեգրվի ՀՀ-ում ներդրված թվային ցանցի տեղեկատվական կառավարման

սերվերներին, թվային ազդանշանի ձևավորման ու հեռարձակման էլեկտրոնային թվային սարքավորումներին, ինչպես նաև հանգույցային, միջանկյալ, վերջնամասային թվային հաղորդիչ սարքավորումներին և արբանյակային հաղորդիչ կայաններին: ***Սարքավորումները պետք է բավարարեն համակցելիության, փոխադարձ փոխարինելիության, ինչպես նաև, երաշխիքային և եզերաշխիքային սպասարկման փուլերում սարքերի, պահեստամասերի, հանգույցների, առանձին ռադիոդետալների և ծրագրային ապահովումների նույնատեսակության պայմաններին, ինչը հնարավոր է միայն մեկ արտադրողի և մեկ մատակարարի դեպքում:***

- ըստ «ELTI» ընկերության 21.01.2016թ. գրության՝ *ընկերությունը չի կարող երաշխավորվել տարբեր արտադրողների և մատակարարների անխափան սնուցման սարքերի միջև փոխգործակցելիությունը NMS-ում:*
- «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի 19.01.2016թ. թիվ 2 կարգադրությամբ ստեղծված մասնագիտական խմբի 21.01.2016թ. եզրակացության համաձայն՝ անխափան սնուցման սարքերի ձեռքբերման պատասխանատու ստորաբաժանման անդամները, Երևանի հաղորդիչ կենտրոնի պետ Էդուարդ Բերբերյանը և տեխնիկական բաժնի պետ Արման Մովսիսյանը, մատակարարի պահեստում զննելով անխափան սնուցման սարքերի գնման 30.11.2015թ. թիվ «ՀՀՌՑ-15.9-ՇՀԱՊՁԲ-15/12» պայմանագրով մատակարարվելիք ապրանքը՝ հաստատել են, որ ***այն համապատասխանում է վերոհիշյալ պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին՝ առանց էական շեղումների (թույլատրելի սահմաններում):***

Հաշվի առնելով վերոգրյալը և նկատի ունենալով, որ նոր ի հայտ եկած հանգամանքների պայմաններում վերանում է ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 12.01.2016թ. կայացրած որոշմամբ արձանագրված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի և 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտումները, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասը, 6-րդ մասի 6-րդ կետը՝ առաջարկում ենք «Գագաթ» ՍՊԸ-ի 21.01.2016թ. բողոքը բավարարել՝ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից անխափան սնուցման սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված

«ՀՀՌՑ-15.9-ԾՀԱՊՁԲ-15/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը հայտարարել օրինական:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ԳԲԽ-03/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան